Հավելված 4
«ՄՏԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/7» ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՄՏԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/7-1

ք.Երևան ____/_____/2019թ.

Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ-ը ի դեմս Վարդանյան Լուսինե-ի, որը գործում է Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Նատալի ֆարմ-ը, ի դեմս տնօրեն Ասատուր Ասատրյան-ի, որը գործում է Նատալի ֆարմ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու

պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.
բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:
2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:
2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,
2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2 Գնորդը պարտավոր է՝
2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 697142.09 (վեց հարյուր ինսունյոթ հազար հարյուր քառասուներկու ինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն ։ Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման,

ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]։

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի

միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

---

[1]Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:
[2]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը կիրառելի չէ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ	**Նատալի ֆարմ**
Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարարներ 42	**Հասցե՝ ք.Երևան,Տիչինայի 3նրբ.,2/2**
ՎՏԲ Հայաստան բանկ Մեղրիի մ/ճ	**Ամերիաբանկ ՓԲԸ**
16099003354200	**1570005065330100**
09705024	**01222567**
Վարդանյան Լուսինե	**Ասատուր Ասատրյան**
_____	**_____**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**
Digitally signed by VARDANYAN LUSINE 6203730057 Date: 2019.02.08 15:41:18 GMT+04:00	Digitally signed by MKRTCHYAN ARSHALUYS 6808770476 Date: 2019.02.05 12:45:51 AMT

Հավելված N 1
____/_____/2019թ. կնքված
ՄՏԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/7 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
6	33141144/503	Ասեղ 22G Ասեղ ներարկիչի	Եվրոմեդ Չինաստան	Ասեղ միանվագ օգտագործման ներարկիչի համար՝ 22G(0,7 x 30), չժանգոտվող	հատ	4.89	7335.00	1500			

				մետաղից: Պայմանական նշանները-<<պահել չորտեղում, տուփում 100հատ Կցված է db151463.pdf							
7	33141144/504	Ասեղ 23G Ասեղ ներարկիչի	Եվրոմեդ Չինաստան	Ասեղ միանվագ օգտագործման ներարկիչի համար՝ 23G(0,5 x 25), չժանգոտվող մետաղից: Պայմանական նշանները-<<պահել չորտեղում, տուփում 100հատ Կցված է	հատ	4.89	2445.00	500	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում

				84298ee9.pdf							
8	33141145/504	անզգայացման ասեղներ Ասեղ ողնուղեղային "Սպինոկան"	Բ.Բրաուն Գերմանիա	Ասեղ ողնուղեղային անեսթեզիային համար Սպինոկան,կտրվածքը Կվինկեի,(4505905),չափը G-25 (նարնջ.) 0,53 x 88мм 3 1/2 ;Ֆորմատը -հատ Կցված է 9289895c.pdf	հատ	421.18	21059.00	50	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
9	33141145/503	անզգայացման ասեղներ Ասեղ ողնուղեղային "Սպինոկան"	Բ.Բրաուն Գերմանիա	Ասեղ ողնուղեղային անեսթեզիային համար Սպինոկան,կտրվածքը Կվինկեի,(4503902),չ	հատ	421.18	8423.60	20	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում

				ափը G-27 (մոխրագ.) 0,42 x 88мм 3 1/2 ;Ֆորմատը -հատ Կցված է 46de1a9a.pdf							
12	33141211/512	Բամբակ Բամբակ	Սիգմա Մեդիքեար Հայաստանի Հանրապետություն	Բամբակ ոչ ստերիլ, սպիտակ, նախատեսված բժշկական նպատակների համար: Մեկ տուփում պարունակող բամբակի ծավալը ոչ պակաս 100 գրամ: Կցված է fceb6349.pdf	հատ	190.00	57000.00	300	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում

13	33141211/513	Բամբակ Բամբակ	Սիգմա Մեդիքեար Հայաստանի Հանրապետություն	Բամբակ ոչ ստերիլ, սպիտակ, նախատեսված բժշկական նպատակների համար: Մեկ տուփում պարունակող բամբակի ծավալը ոչ պակաս 50 գրամ: Կցված է d1a06e3b.pdf	հատ	102.18	20436.00	200	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
16	33141211/514	Բերետ Թասակ	Հուայան Մեդիքալ Չինաստան	Թասակ (գլխարկ) բժշկական №1 Կցված է 8fa71b7b.pdf	հատ	9.57	3349.50	350	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
20	33131340/	Գինեկոլոգ	Հուայան	Կուսկոյի	հատ	89.84	8984.00	100	հասցեն	ենթակա	ժամկետը**

	502	իական հայելի Գին եկոլոգիակ ան հայելի	Մեդիքալ Չ ինաստան	հայելի միանվագ օգտագործ ման Մ- Կի րառվում է գինեկոլոգ իական հե տազոտու թյունների համար : Բ աղկացած է փեղկերից (վերին, ստորին) ա շխատանք ային պատ ուհանից (տեսադաշ տի պատու հան), ֆիք սատորից (կրեմալյ:Ֆո րմատը- հատ Կցված է 21a7203a.pdf						քանակը	
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարար ների 42	Ըստ պա տվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխ ատանքային օրվա ընթացքում
28	33141136/	Թիթեռնիկ	Հուայան	կատետեր-	հատ	16.50	29700.00	1800	հասցեն	ենթակա	Ժամկետը**

	509	- ասեղ G23 Կատետեր երակային թիթեռնիկ	Մեդիքալ Չ ինաստան	թիթեռնիկ G 23 Կցված է 748fea7f.pdf						քանակը	
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
34	33141183/515	Ինտուբացիոն խողովակ մանժետով Էնդոտրախեալ խողովակ	Հուայան Մեդիքալ Չ ինաստան	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 6.5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից Կցված է 834e6031.pdf	հատ	225.00	5625.00	25	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
36	33141183/517	Ինտուբացիոն խողովակ մանժետով Էնդոտրախեալ խողովակ	Հուայան Մեդիքալ Չ ինաստան	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 7.5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-	հատ	225.00	27000.00	120	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում

				տոքսիկ պոլիվինիլքլորիդից Կցված է a41d2990.pdf							
37	33141183/518	Ինտուբացիոն խողովակ մանժետով Էնդոտրախեալ խողովակ	Հուայան Մեդիքալ Չինաստան	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 8 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից Կցված է 0aa6687f.pdf	հատ	225.00	5625.00	25	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
49	33141137/512	Կաթետր միզային երկճյուղ Կատետեր միզային	Չանգժոու Յուանդոն գ Մեդիքասլ Էքվիփմենթ Չինաստան	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 20Fr սիլիկոնապատ: Ֆորմատ-հատ: Կցված է	հատ	183.00	3660.00	20	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում

				a72e20be.pdf							
53	33141156/505	Ձեռնոցներ ոչ ստերիլ Ձեռնոցներ զննման լատեքսից ոչ ստերիլ	Հայ Քեար Թաիլանդ	Ձեռնոցներ զննման լատեքսից՝ ոչ ստերիլ տալկով, L չափի: Կցված է 848770d4.pdf	հատ	13.98	139800.00	10000	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարար ների 42	Ըստ պա տվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխ ատանքային օրվա ընթացքում
54	33141156/506	Ձեռնոցներ ոչ ստերիլ Ձեռնոցներ զննման լատեքսից ոչ ստերիլ	Հայ Քեար Թաիլանդ	Ձեռնոցներ զննման լատեքսից՝ ոչ ստերիլ տալկով, M չափի: Կցված է f4cf86cf.pdf	հատ	13.98	139800.00	10000	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարար ների 42	Ըստ պա տվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխ ատանքային օրվա ընթացքում
55	33141156/507	Ձեռնոցներ ոչ ստերիլ Ձեռնոցներ զննման լատեքսից ոչ ստերիլ	Հայ Քեար Թաիլանդ	Ձեռնոցներ զննման լատեքսից ոչ ստերիլ չափսը S №100 Կցված է fd1d069a.pdf	հատ	13.98	69900.00	5000	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարար ների 42	Ըստ պա տվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխ ատանքային օրվա ընթացքում

56	33141159/504	Ձեռնոցներ ստերիլ Ձեռնոցներ վիրաբուժական մանրէազերծ	Շանդոգ Չինաստան	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 6.5; ախտահանված,երկարությունը մինչև 285մմ,անատոմիական; ֆորմատը զույգ; Կցված է b35631f3.pdf	զույգ	98.00	39200.00	400	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
57	33141159/505	Ձեռնոցներ ստերիլ Ձեռնոցներ վիրաբուժական մանրէազերծ	Շանդոգ Չինաստան	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 7;ախտահանված,երկարությունը մինչև 285 մմ,անատոմիական;ֆորմատը զույգ;	զույգ	98.00	29400.00	300	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում

				Կցված է 1812856d.pdf							
58	33141159/506	Ձեռնոցներ ստերիլ Ձեռնոցներ վիրաբուժական մանրէազերծ	Շանդոգ Չինաստան	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 7.5; ախտահանված,երկարությունը մինչև 285մմ,անատոմիական; ֆորմատը զույգ; Կցված է 8921fafb.pdf	զույգ	97.99	48999.99	500	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
59	33141159/507	Ձեռնոցներ ստերիլ Ձեռնոցներ վիրաբուժական մանրէազերծ	Շանդոգ Չինաստան	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 8;ախտահանված,երկարությունը մինչև 285 մմ,անատո	զույգ	98.00	29400.00	300	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
									ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի , Գ ործարարների 42	Ըստ պատվերի	Պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում

				միական;Ֆ որմատը զույգ; Կցված է 22c72c9b. pdf					

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

** Այս սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ
Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարարներ 42
ՎՏԲ Հայաստան բանկ Մեղրիի մ/ճ
16099003354200
09705024
Վարդանյան Լուսինե

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by VARDANYAN LUSINE 6203730057
Date: 2019.02.08 15:41:48 GMT+04:00

ՎԱՃԱՌՈՂ
Նատալի ֆարմ
Հասցե՝ ք.Երևան,Տիչինայի 3նրբ.,2/2
Ամերիաբանկ ՓԲԸ
1570005065330100
01222567
Ասատուր Ասատրյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MKRTCHYAN ARSHALUYS 6808770476
Date: 2019.02.05 12:45:30 AMT

Հավելված N 2
____/_____/2019թ. կնքված
ՄՏԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/7 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
6	33141144/503	Ասեղ 22G													7335.00
7	33141144/504	Ասեղ 23G													2445.00
8	33141145/504	անզգայացման ասեղներ													21059.00
9	33141145/503	անզգայացման ասեղներ													8423.60
12	33141211/51	Բամբակ													57000.

	2														00
13	33141211/513	Բամբակ													20436.00
16	33141211/514	Բերետ													3349.50
20	33131340/502	Գինեկոլոգիական հայելի													8984.00
28	33141136/509	Թիթեռնիկ - ասեղ G23													29700.00
34	33141183/515	Ինտուբացիոն խողովակ մանժետով													5625.00
36	33141183/517	Ինտուբացիոն խողովակ մանժետով													27000.00
37	33141183/518	Ինտուբացիոն խողովակ մանժետով													5625.00
49	33141137/512	Կաթետր միզային երկճյուղ													3660.00
53	33141156/505	Ձեռնոցներ ոչ ստերիլ													139800.00
54	33141156/506	Ձեռնոցներ ոչ ստերիլ													139800.00
55	33141156/507	Ձեռնոցներ ոչ ստերիլ													69900.00
56	33141159/504	Ձեռնոցներ ստերիլ													39200.00

57	33141159/505	Ձեռնոցներ ստերիլ													29400.00
58	33141159/506	Ձեռնոցներ ստերիլ													48999.99
59	33141159/507	Ձեռնոցներ ստերիլ													29400.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ԳՆՈՐԴ

Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարարներ 42

ՎՏԲ Հայաստան բանկ Մեղրիի մ/ճ

16099003354200

09705024

Վարդանյան Լուսինե

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by VARDANYAN LUSINE 6203730057
Date: 2019.02.08 15:42:03 GMT+04:00

ՎԱՃԱՌՈՂ

Նատալի ֆարմ

Հասցե՝ ք.Երևան,Տիչինայի 3նրբ.,2/2

Ամերիաբանկ ՓԲԸ

1570005065330100

01222567

Ասատուր Ասատրյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MKRTCHYAN ARSHALUYS 6808770476
Date: 2019.02.05 12:45:16 AMT

Հավելված N 3
____/_____/2019թ. կնքված
ՄՏԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/7 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների,մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
6	Ասեղ 22G	Ասեղ միանվագ օգտագոր						

		ծման ներարկիչի համար՝ 22G(0,7 x 30), չժանգոտվող մետաղից: Պայմանական նշանները-<<պահել չոր տեղում, տուփում 100հատ(Կցված է db151463.pdf)						
7	Ասեղ 23G	Ասեղ միանվագ օգտագործման ներարկիչի համար՝ 23G(0,5 x 25), չժանգոտվող մետաղից: Պայմանական նշանները-<<պահել չոր տեղում, տուփում 100հատ(Կցված է 84298ee9.pdf)						
8	անզգայացման ասեղներ	Ասեղ ողնուղեղային անեսթեզիային համար Սպինոկան,						

		կտրվածքը Կվինկեի ,(4505905) ,չափը G-25 (նարնջ.) 0,53 x 88мм 3 1/2;Ֆորմատը -հատ(Կցված է 9289895c.pdf)						
9	անզգայացման ասեղներ	Ասեղ ողնուղեղային անեսթեզիային համար Սպինոկան, կտրվածքը Կվինկեի ,(4503902) ,չափը G-27 (մոխրագ.) 0,42 x 88мм 3 1/2;Ֆորմատը -հատ(Կցված է 46de1a9a.pdf)						
12	Բամբակ	Բամբակ ոչ ստերիլ, սպիտակ, նախատեսված բժշկական նպատակների համար: Մեկ տուփում						

		պարունակող բամբակի ծավալը ոչ պակաս 100 գրամ: (Կցված է fceb6349.pdf)						
13	Բամբակ	Բամբակ ոչ ստերիլ, սպիտակ, նախատեսված բժշկական նպատակների համար: Մեկ տուփում պարունակող բամբակի ծավալը ոչ պակաս 50 գրամ:(Կցված է d1a06e3b.pdf)						
16	Բերետ	Թասակ (գլխարկ) բժշկական №1(Կցված է 8fa71b7b.pdf)						
20	Գինեկոլոգիական հայելի	Կուսկոյի հայելի միանվագ օգտագործման M- Կ իրառվում է գինեկոլո						

		գիական հետազոտությունների համար : Բաղկացած է փեղկերից (վերին, ստորին) աշխատանքային պատուհանից (տեսադաշտի պատուհան), ֆիքսատորից (կրեմալյ:ֆորմատը-հատ (Կցված է 21a7203a.pdf)						
28	Թիթեռնիկ - ասեղ G23	կատետեր -թիթեռնիկ G 23(Կցված է 748fea7f.pdf)						
34	Ինտուբացիոն խողովակ մանժետով	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 6.5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից(Կցված է 834e6031.						

		pdf)						
36	Ինտուբացիոն խողովակ մանժետով	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 7.5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից(Կցված է a41d2990.pdf)						
37	Ինտուբացիոն խողովակ մանժետով	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 8 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից(Կցված է 0aa6687f.pdf)						
49	Կաթետր միզային երկճյուղ	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 20Fr սիլիկոնապատ: Ֆորմատ-հատ:(Կցված է a72e20be.pdf)						
53	Ձեռնոցներ ոչ	Ձեռնոցներ զննման						

	ստերիլ	լատեքսից՝ ոչ ստերիլ տալկով, L չափի:(Կցված է 848770d4.pdf)						
54	Ձեռնոցներ ոչ ստերիլ	Ձեռնոցներ զննման լատեքսից՝ ոչ ստերիլ տալկով, M չափի:(Կցված է f4cf86cf.pdf)						
55	Ձեռնոցներ ոչ ստերիլ	Ձեռնոցներ զնման լատեքսից ոչ ստերիլ չափսը S №100(Կցված է fd1d069a.pdf)						
56	Ձեռնոցներ ստերիլ	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 6.5; ախտահանված,երկարությունը մինչև 285մմ,անատոմիական;ֆորմատը զույգ;(Կցված է b35631f3.pdf)						

57	Ձեռնոցներ ստերիլ	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 7;ախտահանված,երկարությունը մինչև 285 մմ,անատոմիական; ֆորմատը զույգ;(Կցված է 1812856d.pdf)						
58	Ձեռնոցներ ստերիլ	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 7.5; ախտահանված,երկարությունը մինչև 285մմ,անատոմիական;ֆորմատը զույգ;(Կցված է 8921fafb.pdf)						
59	Ձեռնոցներ ստերիլ	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 8;ախտահանված,երկարությունը մինչև 285 մմ,անատոմիական;						

		ֆորմատը զույգ;(Կցված է 22c72c9b.pdf)						

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	**Ապրանքը ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 3.1
____/_____/2019թ. կնքված
ՄՏԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/7 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ -ի (այսուհետ՝ Գնորդ) և Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ (այսուհետ՝ Վաճառող)
միջև 20 թ._____ -ին կնքված N_____
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Ասեղ 22G	հատ	
Ասեղ 23G	հատ	
անզգայացման ասեղներ	հատ	
անզգայացման ասեղներ	հատ	
Բամբակ	հատ	
Բամբակ	հատ	
Բերետ	հատ	
Գինեկոլոգիական հայելի	հատ	
Թիթեռնիկ - ասեղ G23	հատ	
Ինտուբացիոն խողովակ մանժետով	հատ	
Ինտուբացիոն խողովակ մանժետով	հատ	
Ինտուբացիոն խողովակ մանժետով	հատ	
Կաթետր միզային երկճյուղ	հատ	
Ձեռնոցներ ոչ ստերիլ	հատ	
Ձեռնոցներ ոչ ստերիլ	հատ	
Ձեռնոցներ ոչ ստերիլ	հատ	
Ձեռնոցներ ստերիլ	զույգ	
Ձեռնոցներ ստերիլ	զույգ	
Ձեռնոցներ ստերիլ	զույգ	
Ձեռնոցներ ստերիլ	զույգ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց**
_____	հայտը նախագծած ներկայացուցիչ՝
ազգանուն, անուն	_____
_____	ազգանուն, անուն
ստորագրություն	_____
	ստորագրություն